ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

08.06.2022թ. թվականին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/35-1 գնման պայմանագրի

ք. Երևան

«30» 06 2022թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ ՓԲԸ» ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն՝ Է. Թարփոշյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, «Արպանիվ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խանդանյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 08.06.2022թ. կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/35-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը և հաշվի առնելով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ծառայության ձեռքբերման համար հատկացված 178200000 (հարյուր յոթանասունութ միլիոն երկու հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Պայմանագրի Հավելված N 2-ով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացված մատակարարման ժամկետները շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ՝ «*Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ Պատվիրատուի կողմից պատվեր-հայտը ներկայացնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Մինչև 30.12.2022 թվականը պահանջ չներկայացվելու դեպքում չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության*»:
2. Պայմանագրի Հավելված N 3-ով ներկայացված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը փոփոխել և հաստատել ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՊՈԱԿ | «Արպանիվ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Թևոսյան փ.5 | ՀՀ, ք. Երևան, Նար-Դոսի 122 |
| Հայէկոնոմբանկ ՓԲԸ | «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ |
| ՀՀ՝ 163078035496 | Հ/Հ՝ 217002119584001 |
| ՀՎՀՀ՝ 00875439 | ՀՎՀՀ՝ 09209297 |
| Տնօրեն՝ ------------------ Է. Թարփոշյան | Տնօրեն՝ ------------------ Ա. Խանդանյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
«08» հունիսի 2022թ. կնքված
ԵՍ-ԷԱՃԱՊՁԲ-22/35-1 ծածկագրով պայմանագրի
«30» 06 2022թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 34351200/503 | Անվադող 7.50R20 համասեզոնային | - | - | - | - | - | 59400000 | 59400000 | 59400000 | 59400000 | 59400000 | 59400000 | 59400000 | 59400000 |
| 2 | 34351200/504 | Անվադող 255/70R22.5 համասեզոնային | - | - | - | - | - | 118800000 | 118800000 | 118800000 | 118800000 | 118800000 | 118800000 | 118800000 | 118800000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**
«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Թևոսյան փ.5
Հայէկոնոմբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 163078035496
ՀՎՀՀ՝ 00875439
Տնօրեն՝ ________ Է. Թարփոշյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
«Արպանիվ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Նար-Դոսի 122
«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ՝ 217002119584001
ՀՎՀՀ՝ 09209297
Տնօրեն՝ ________ Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.